AMINTAS GROUP

# ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԱՐԺԵՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ԱՄԻՆՏԱՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ 2024

*«ՀՀ ԱՆ ՀԿԱԾ» Արարատի և Վայոց Ձորի*

*մարզային բաժնի պետ Լ.Դանիելյանին*

*Հարգելի՛ պարոն Դանիելյան*

Ի պատասխան Ձեր 26.02.2024թ. թիվ Ե-22688-2024 (կատարողական վարույթ՝ 10750765, 10750766, 10750768) գրության, Ձեզ ենք ներկայացնում ՀՀ մարզ Արարատ համայնք Դիմիտրով Մաշտոցի փողոց թիվ 24/2 հասցեում գտնվող անշարժ գույքի սեփականության իրավունքի շուկայական արժեքի գնահատման հաշվետվությունը:

**Հարգանքներով՝**

ՏՆՕՐԵՆ Մ. Հակոբյան

23.04.2024թ.

Արցախի փողոց 23/6

Հեռ. (010) 43 22 76

AMINTAS GROUP

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

*Գ/Վ-ԴՄ98*
*23.04.2024թ.*
*«ՀՀ ԱՆ ՀԿԱԾ» Արարատի և Վայոց Ձորի մարզային բաժնի պետ Լ.Դանիելյանին*

*Հարգելի՛ պարոն Դանիելյան*

Համաձայն 11.07.2023թ.-ին կնքված թիվ ՀԿԱԾ-ԱՄԳ/ԱԳԳԾ-23/1 պայմանագրի և ի կատարումն Ձեր՝ 26.02.2024թ. թիվ Ե-22688-2024 (կատարողական վարույթ՝ 10750765, 10750766, 10750768) գրության, Ձեզ ենք ներկայացնում ՀՀ մարզ Արարատ համայնք Դիմիտրով Մաշտոցի փողոց թիվ 24/2 հասցեում գտնվող անշարժ գույքի սեփականության իրավունքի շուկայական արժեքի գնահատման հաշվետվությունը:

Գնահատման ներկայացված անշարժ գույքի (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 17102019-03-0050, հաստատված 17.10.2019թ.) ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացիներ

Համաձայն գնահատման ՀՀ մարզ Արարատ համայնք Դիմիտրով Մաշտոցի փողոց թիվ 24/2 հասցեում գտնվող անշարժ գույքի սեփականության իրավունքի շուկայական արժեքը առ 23.02.2024թ. կազմում է **23,300,000 (քսաներեք միլիոն երեք հարյուր հազար)** ՀՀ դրամ:

Առկա ինքնակամ շինությունը սեփականության իրավունքով պատկանելու դեպքում ՀՀ մարզ Արարատ համայնք Դիմիտրով Մաշտոցի փողոց թիվ 24/2 հասցեում գտնվող անշարժ գույքի սեփականության իրավունքի շուկայական արժեքը առ 23.02.2024թ. կկազմի **25,000,000 (քսանհինգ միլիոն)** ՀՀ դրամ:

Կից ներկայացվում է գնահատման ներկայացված անշարժ գույքի սեփականության իրավունքի շուկայական արժեքի գնահատման հաշվետվությունը կազմված 31 էջից:

ՀԱՐԳԱՆՔՆԵՐՈՎ՝

ՏՆՕՐԵՆ՝ Մ. Հակոբյան

ԳՆԱՀԱՏՈՂ՝ Հ. Ղասաբյան
Վկայական ԳԳ-2022-65

Գնահատումը իրականացվել է Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին «Հայաստանի Հանրապետության օրենքի», ինչպես նաև «Հայաստանի Հանրապետությունում անշարժ գույքի գնահատման ստանդարտի» պահանջներին համաձայն:

Արցախի փողոց 23/6
«ՏՈՒՆ ԴԵՊՈ» համալիր
Էլ. փոստ amintasgroup@mail.ru

Հեռ (010) 43 22 76
Բջջ. (094) 43 22 76
(096) 43 22 76

## 1.7. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԺԵՔԻ ՏԵՍԱԿԸ

**Գնահատման արժեքի տեսակը վերոգրյալ հասցեում գտնվող անշարժ գույքի սեփականության իրավունքի շուկայական արժեքի որոշումն է տեղազննության օրվա դրությամբ:**

Սույն հաշվետվության մեջ *"ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԱՐԺԵՔ"* հասկացությունը մեկնաբանվում է հետևյալ ձևով.

*Շուկայական արժեքը հաշվարկային դրամական մեծություն է, որով հավանաբար կիրականացվեր, գնահատման ամսաթվի դրությամբ, շահագրգիռ կողմերի միջև, բաց և մրցակցային շուկայում գնահատվող օբյեկտի փոխանակում, որի պարագայում կողմերից յուրաքանչյուրը, իրազեկված լինելով, գործում է ողջամտորեն և առանց հարկադրանքի:*

## 1.8. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Գնահատման աշխատանքների ընթացակարգը բաղկացած է հետևյալ հաջորդական փուլերից. նախապատրաստական փուլ և հիմնական փուլ :

1) **Նախապատրաստական** փուլում իրականացվում է՝

ա. գնահատվող օբյեկտի փաստաթղթերի հավաքագրում և ուսումնասիրություն, պատվերի ընդունում,

բ. գնահատման առաջադրանքի ձևակերպում և պայմանագրի կնքում:

2) **Հիմնական** փուլում իրականացվում է՝

ա. գնահատվող օբյեկտի տեղազննում (լուսանկարում) (կախված գնահատվող օբյեկտի տեսակից),

բ. գնահատման համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրում, մշակում և վերլուծություն,

գ. գնահատման համապատասխան սկզբունքների, մոտեցումների և մեթոդների ընտրություն,

դ. գնահատում՝ ընտրված մոտեցման (կամ մոտեցումների) կիրառմամբ,

ե. վերջնական արդյունքի հաշվարկման նպատակով տարբեր մոտեցումներով հաշվարկված արդյունքների համադրում,

զ. հաշվետվության կազմում և տրամադրում

## 1.9. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Գնահատվող անշարժ գույքը գտնվում է ՀՀ մարզ Արարատ համայնք Դիմիտրով Մաշտոցի փողոց թիվ 24/2 հասցեում: Գնահատվող անշարժ գույքը գտնվում է կադաստրային տարածագնահատման 13-րդ գնային գոտում.

| ԳՈՏԻՆ | ԳՈՏԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԵՐԻ ԳՈՐԾԱԿԻՑԸ | ԳՈՏԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻ ԳՈՐԾԱԿԻՑԸ | ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԱՐԺԵՔԸ |
|---|---|---|---|
| XIII | 0,1422 | 0,00569 | 1 877,70 |

Ստորև ներկայացված է ՀՀ քարտեզի այն հատվածը, որտեղ գտնվում է գնահատվող անշարժ գույքը:

https://www.google.com/maps/place/40%C2%B000'14.9%22N+44%C2%B028'53.4%22E/@40.0094728,44.4726236,13.5z/data=!4m4!3m3!8m2!3d40.004135!4d44.481511?entry=ttu




## *1.10. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ*

| Անվանումը | Հողամաս |
|---|---|
| Իրավունքի տեսակը | ընդհանուր համատեղ սեփականություն |
| Նպատակային նշանակությունը | արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության |
| Գործառնական նշանակությունը | գյուղատնտեսական արտադրական օբյեկտների |
| Հողամասի մակերեսը | 5 232.5քմ |
| Կադաստրային ծածկագիրը | ըստ սեփականության վկայականի՝ 03-038-0022-0001, ըստ կադաստրային քնութագրի՝ 03-038-0022-0006 |
| Լրացուցիչ տվյալներ | հողամասը հարթ է, երեք կողմից առանց սահմանազատման |
| **Անվանումը** | **Անասնաշենք** |
| Հասցեն | ՀՀ մարզ Արարատ համայնք Դիմիտրով Մաշտոցի փողոց թիվ 24/2 |
| Վկայականի համարը և հաստատման ամսաթիվը | 17102019-03-0050, հաստատված 17.10.2019թ. |
| Վկայականի լրացուցիչ նշումներ | *հողամասում առկա է ինքնակամ կառուցված շինություն 77.28քմ մակերեսով* |
| Սեփականատեր | |
| Իրավունքի տեսակը | ընդհանուր համատեղ սեփականություն |
| Կառուցման տարեթիվը | 1970-ական թվականներ |
| Հարկայնությունը | 1 հարկ |
| Շենքի հիմքը | բետոն |
| Շենքի պատերը | կառուցված են երկաթ-բետոնյա սյուներով, հեծաներով բլոկներով և քարով |
| Տանիքը | հարթ տանիքածածկ |
| Միջհարկային ծածկը | մետաղյա, փայտե տարրերով |
| Առաստաղի բարձրությունը | մոտ 3.5մ |
| Շինության մակերեսը | ընդհանուր՝ 479.3քմ |
| Դռները | մուտքերի դռները՝ մետաղյա |
| Պատուհանները | մետաղյա շրջանակով, փայտե |
| Հատակը | բետոն |

AMINTAS GROUP

| | |
|---|---|
| Պատերը | ներկանյութ, գաջասվաղ, ց/ա սվաղ<br>մասամբ՝ առանց հարդարման |
| Սանհանգույց | --- |
| Կոմունալ հարմարություններ | --- |
| ժանդակ շինությունների մակերեսը | ինքնակամ շինություն (պահակատուն)՝ 77.28քմ |
| Լրացուցիչ նշումներ | ինքնակամ շինությունը կառուցված է քարե պատերով, երկաթ-բետոնյա ծածկով, տանիքածածկը՝ մետաղյա թիթեղ |
| րքին հարդարման աստիճանը /1-7/<br>.գրոյական վիճակ, 2.վատ վիճակ,<br>3.միջինից ցածր վիճակ, 4.միջին<br>ակ, 5.միջինից բարձր վիճակ 6. լավ<br>վիճակ, 7.գերազանց վիճակ | 3.միջինից ցածր վիճակ |
| րանսպորտային մատչելիությունը | միջին |

Ստորև ներկայացվում է գնահատման ներկայացված անշարժ գույքի որոշ լուսանկարներ.










